

25. 185

# Օսմանեան Արեւէրական Դրամատուն

Հիմնումն

11 Բանագան 1328 և 2 Սեպտեմբեր 1326 (1910) թուակիք  
ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԻՐԱԾԵՈՎ.

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ  
ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 100,000 ՕՍՄ. ՈՍԿԻ  
ԲԱԺՆՈՒԱԾ ԻԿՐԱՔԱՆՁԻՒՐ 5 ՈՍԿԻՆՑ ԿՐՈՂԻՆ ՍԵՊԶԱԿԱՆ  
20,000 ԲԱԺՆԵՅՈՒՂԹԵՐՈՒ

## ԿԱՆՈՆԱԳԻՐ

4. ՊՈԼԻՍ

ԱՐԵՎԷՐԱԿԱՆ ՆՈՐ ՏՊԱՐԱՆ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

1913

340  
1491-40

$$\begin{array}{r} 340 \\ \times 90 \\ \hline 340 \end{array}$$

332.1

A circular blue ink stamp with a decorative border. The text inside reads "ՀԱՅՈՂ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՈԽԱԿԱՆ ԲՈԼՈՂՈՒՅՈՒՆ Հ.Ս.Բ.Դ. 7/11. 1922 Ա. Ա. ԱԶԳԱԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ

5 JAN 2010

# Օսմանեան Արեւածրական Դրամատուն

Հիմնութեած

11 Բանագան 1328, եւ 2 Սեպտեմբեր 1326 (1910) թուակիր  
ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԻՐԱ.ՏԵՂՈՎ

1003

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ  
ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 100,000 0ՍՄ. ՈՍԿԻ  
ԲԱԺՆՈՒԱԾ ԻՒՐԱՔԱՆՁԻՒՐԸ 5 ՈՍԿԻՆՈՑ ԿՐՈՐԸՆ ՍԵՊԱԿԱՆ  
20,000 ԲԱԺՆԵԲՈՒՅՆՑԵՐՈՒ

ԿԱՆՈՆԱԳԻՐ

Կ. ՊՈԼԻՍ

ԱՐԵՒՏՐԱԿԱՆ ՆՈՐ ՏՊԱՐԱՆ ՑՈՎԱԿԻՄԵԱՆ  
**1913**

3 SEP 2013

Ճ. 105

# ՕՍՄԱՆԵԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

## Կ Ա Շ Ո Ն Ա Գ Ի Բ

### ԳԼՈՒԽ Ա.

ԿՈՂՄՈՒԹԻՒՆ — ԵՊԱԾՈՒ — Ա.ՅՈՒՆ — ԿԵՊՐՈՒ.ԱՏԵՂ.Ի — ՏԵԽՈՂ.ՅՈՒԹԻՒՆ

### Յօդուած 1

Հետեւալ ստորագրողներուն, Յարութիւն Ապահնանի,  
Հեխում Ակթեսնի, օսմանեան հպատակ վաճառականներ,  
կարավետ Թահթափրունանի և Մկրտիչ Մանուկեանի,  
օսմանեան հպատակ ղրամառէրներ և Ա. Կ. Արսէնի, վաճա-  
ռական, և յետագաց կերպով ստեղծուած բոլոր բաժնեթուղ-  
թերու տէրերու միջն Օսմանեան Մանասն Բնկերութիւն մը  
կազմուած է:

### Յօդուած 2

Բնկերութեան անունն է.

### ՕՍՄԱՆԵԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

որ ենթակայ է, Տէրութեան արդի և ապագայ օրէնքներուն  
և կանոններուն:

### Յօդուած 3

Բնկերութեան նորատակն է

1. Կատարել թէ Թուրքիոց և թէ Արտասահմանի մէջ, իր

հաշւոյն, ուրիշներու հաշւոյն կամ մասնակցութեամբ, զրամական, գեղի, փոխառուութեան, վարկի և քօմիսիօնի ամէն գործողութիւններ, ամէն ահսակ բաժնեթուղթերու հրապարակ ւանումներ, ստորագրութիւններ և վաճառումներ, և ընդհանրապէս դրամական և վարկի հաստատութիւններու վերաբերեալ սեղանաւորական, ճարտարարուեստական, առևտրական և շարժուն ստացուածքներու ամէն գործեր, ինչպէս և աճուրդի նուազուրդի մասնակցութիւններ :

2. Կատարել թէ Թուրքիոյ և թէ արտասամանի մէջ, իր հաշւոյն, ուրիշներու հաշւոյն կամ մասնակցութեամբ, մասնաւորապէս ընկերութիւններ կազմելու և հիմնելու ձեին տակ ամէն գործողութիւններ և ձեռնարկութիւններ, որոնք կընան շահագործել ճարտարարուեստը, վաճառականութիւնը, սեղանաւորութիւնը, հանրօգուտ շինութիւնները, երկրագործութիւնը, կամ ուղղակի կամ անուղղակի կերպով անոնց հետ կրնան առնչութիւն ունենալ:

Ընկերութեան արգիլուած է շահագիտական ամէն գործութիւններ :

#### Յօդուած 4

Ընկերութեան կերպնատեղին կ. Պոլիս հաստատուած է :  
Ընկերութիւնը կրնայ, Վարչական Խորհուրդին սպարզուցումով, թէ Թուրքիոյ և թէ արտասահմանի մէջ, հաստատել գրասենեակիններ, գործակալութիւններ, մասնաձիւղեր և ներկայացուցիչներ կարգել :

#### Յօդուած 5

Ընկերութեան տեղութիւնը, բաց ի պայմանաժամէն առաջ լուծման կամ երկարաձգման պարագայէն, որոշուած է յիսուն տարի՝ իր հաստատութեան թուականէն, տասն և մէկ Յունիս (1327) (1911) էն հաշուելով :

#### ԳԼՈՒԽ Բ.

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԹԻՒՆ

#### Յօդուած 6

Ընկերութեան զրամագլուխն է 100,000 օսմ. ոսկի, կրողին վճարելի քանան հազար բաժնեթուղթերու բաժնուած, իւրաքանչիւրը հինգ օսմ. ոսկինոց :

Ընդհանուր ժողովը կրնայ զրամագլուխը 50 % աւելցընել և իր որոշման համաձայն ու Կառավարութեան արտօնութիւնով պարտավուղթեր հանել, որոնց գումարը բաժնեթուղթ-զրամագլուխուն կէսէն աւելի չի պիտի ըլլայ :

Բաժնեթուղթերը և պարտավուղթերը, հրապարակ հանելէ առաջ, պէտք է երկու օրինակ ներկայացնել Առևտրական և Հանրօգուտ Շինութեանց Նախարարութեան :

#### Յօդուած 7

Ընկերութիւնը վերջնական կերպով կազմուած պիտի նկատուի, երբ ամբողջ զրամագլուխը ստորագրուած, և՝ Պոլսոյ մէջ՝ առաջին մասնավճարը, այսինքն իւրաքանչիւր բաժնեթուղթի մէկ և մէկ քառորդ օսմաննան ոսկին, ստորագրութեան պահուն վճարուած ըլլայ :

Միւս մասնավճարները պիտի պահանջուին այն թուականներուն և այն քանակութեամբ, զորս պիտի որոշէ Վարչական Խորհուրդը :

Դրամ ուղղուելու ժամանակը պաշտօնաթերթին և կ. Պոլսոյ ուրիշ թերթի մը մէջ հրապարակուած յայտարարութիւնով մը՝ բաժնեստէրերուն առնուազն մէկ ամիս առաջ պիտի ծանուցուի :

Կրողին վճարելի բաժնեթուղթերուն յանձնումը տեղի պիտի ունենայ՝ մէկ և մէկ քառորդ օսմ. ոսկիի առաջին մասնավճարէն և յետագայ բոլոր միւս վճարումները պիտի նշանակուին բաժնեթուղթերուն վրայ :

Բաժնեթուղթերը խմբագրուած պիտի ըլլան, մէկ կողմը  
թրքերէն և միւս կողմը ֆրանակրէն և հայկրէն :

Յօդուած 8

Բաժնեթուղթերը անբաժանելի են Ընկերութեան առջև, որ իւրաքանչիւր բաժնեթուղթի համար մէկ սեփականատէր միայն կը ճանչնայ:

Բաժնեստէրի մը ժառանգորդները կամ պահանջատէրերը չեն կրնար ու է պատրուակով՝ Ընկերութեան շարժուն և անշարժ գոյքերուն վրայ, արգելք զնել, ոչ աղ, ու է եղանակով, միջամտիս ըլլալ անոր վարչութեան: Իրենց իրաւունքը ի գործ դնելու համար պարտաւոր են համակերպիլ տարեկան ցուցակագիրներուն (inventaires), Ընկերութեան տօնարներուն և Ընդհ. ժողովի որոշումներուն:

Յօդուած 9

Որոշուած ժամանակի մէջ չի ճարուած ո և է գումար, ի նախատ Ընկերութեան տարեկան 6<sup>0</sup>/0 տոկոսի կենթարկուի, վճարման թուականէն հաշուելով և առանց օրինական հրաւէրի:

Յօդուած 10

Պահանջելի մասնավճարները եթէ չի ճարուին, Ընկերութեանը առանց օրինական հրաւէրի և առանց դաստական միջոցի զիմելու, իրաւունք ունի անվճար մնացած բաժնեթուղթերը ծախելու՝ վնասը և շահը չը վճարող բաժնեստէրերուն պատրանելու պայմանաւ:

Ասոր համար չը վճարուած բաժնեթուղթերուն թիւերը տասն և հինգ օր առաջ պիտի հրատարակուին օրավիճերթերուն մէջ: Երբ այս պայմանաժամը աւարտի, բաժնեթուղթերը պիտի ծախուին, Պոլսոյ մէջ, փոխանակութեանց զործակալի մը կամ միջնորդի մը ձեռքով և կամ համբային աճուրդով:

Այս կերպով ծախուած բաժնեթուղթերը չեղեալ պիտի նկատուին և գնողներուն միհնոյն թիւով նոր բաժնեթուղթեր պիտի յանձնուեին:

Վաճառման արդիւնքը, ծախքերուն գեղչուելէն հաքք, ապարդ սեփականատէրին Ընկերութեան ունեցած սրբութին պիտի տարուի, եթէ պակախ, տարբերութիւնը պիտի սահանջուի իրմէ, իսկ եթէ տաելնայ, իրեն պիտի վերապարձուի աւելցածը:

Այն ամէն բաժնեթուղթ, որ պահանջուած մասնավճարները կատարուած ըլլալուն վիշտակութիւնը չի կրեր, վաճառվի ըլլալէ կը դարձի, և ո և է շահարաժին չի վճարուիր անոր:

Ներկայ յօդուածով արտօնուած միջոցները չեն արգիլեր Ընկերութիւնը օրինական միջոցներու ևս զիմնլու:

Բաժնեթուղթերը պիտի համուեն բունաւոր տետրականը և թուազլուած ու Ընկերութեան կնիքով կնքուած և սոսրազրելու. իսկ միւս էլսին նախապատութիւնն իրաւունքը պիտի վերապահուի անոնց՝ որոնք նոյն միջոցին բաժնեստէր են:

Նոր բաժնեթուղթերով դրամագրուիը աւելնալու պարագային, հիմնաղիր բաժնեստէրերը՝ նախապատութիւնն իրաւունք պիտի ունենան հրատարակութիւնը բաժնեթուղթերուն կէսը ստորագրելու. իսկ միւս էլսին նախապատութիւնն իրաւունքը պիտի վերապահուի անոնց՝ որոնք նոյն միջոցին բաժնեստէր են:

Նախապատութիւնն այս իրաւունքը պիտի գործադրութիւնը իւրաքանչիւրին ունեցած բաժնեթուղթերուն թիւին համամատութիւնը:

Բաժնեթուղթերուն փոխանցումը կը կատարուի պարզապէս անոնց յանձնումովը: Բաժնեթուղթերուն և հիմնաղիրի բաժիններուն ունեցած իրաւունքներն և պարտականութիւնները կը վերաբերին անոնց՝ որոնց ձեռքը կը գտնուի արժեթուղթերը:

Բաժնեթուղթի մը սեփականութիւնը իրեն հատ կը կրէ կատարեալ հաւանութիւն Ընկերութեան կանոնագրին և Ընդհ. ժողովի որոշումներուն:

Յօդուած 11

Հիմնադիրի բաժին անսւճով կրողին վճարելի երկու հազար բաժնեթուղթեր հանուած են, որոնք հիմնադիրներուն պիտի յանձնուին՝ իրենց ունեցած բաժնեթուղթերուն համեմատութեամբ, առանց ու և է փոխարժեքի:

Հիմնադիրի բաժին ունեցողները՝ սպարտաւոր են համակերպելու ներկայ Կանոնագրին ընդհ. տրամադրութիւններուն և ընդհ. ժողովին կողմանէ արուած որոշումներուն:

Սնոնք իրաւունք չունին Ընկերութեան գործերուն միջամտուխ ըլլալու:

ԳԼՈՒԽ Գ.

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Յօդուած 12

Ընկերութեան գործերը պիտի վարէ Վարչական Խորհուրդ մը, որ բաղկացած պիտի ըլլայ առ նուազն հինգ և առ առաւելն ինն անդամէ, զորս բաժնետէրերու ընդհ. Ժողովը պիտի ընտրէ:

Սակայն բացառաբար առաջին Վարչական Խորհուրդին անդամները պիտի ըլլան, երեք տարրուան համար, հետևեալ անձերը, որոնց անուանումը պիտի չնեթարկուի Ընդհ. Ժողովին հաւանութեանը.

Տեարք Ա. Կ. Արսեն

Եդուարդ Գարակիօվեան  
Կարապետ Թահիրապրունեան  
Հերում Սերեան  
Մկրտիչ Մանուկեան  
Յարուբիւն Ալանեան  
Սիմոն Քայսերլեան

Վարչական Խորհուրդի անդամներուն կէսը պէտք է ընտրուին օսմանեան հպատակներէն: Պաշտօնեաները, բաց ի մասնագէտներէն, պէտք է առնուին օսմանեան հպատակներէն:

Յօդուած 13

Երեք տարրուան համար ընտրուած առաջին Վարչական Խորհուրդը պաշտօնի վրայ պիտի մնայ մինչև 1914 ի սովորական Ընդհ. Ժողովը, որ ամբողջութեամբ պիտի վերանորոգէ Վարչական Խորհուրդը:

Այս թուականէն վերջ Վարչական Խորհուրդը տարեկան Ընդհ. Ժողովին մէջ պիտի վերանորոգուի վարիչներու թիւով մը, որ պիտի որոշուի պաշտօնի վրայ գտնուող անդամներու քանակին համաձայն, այսպէս որ վերանորոգումը թէ կարելի եղածին չափ կանոնաւոր և թէ իւրաքանչիւր երեք տարրուան շրջանի մէջ ամբողջովին կատարուած ըլլայ:

Առաջին տարրուան համար ելլող անդամները վիճակով պիտի որոշուին և անկէ վերջ հնութեան կարգով: Ելլող անդամները միշտ վերընորելի են:

Յօդուած 14

Վարչական Խորհուրդը նիստ կը գումարէ այնքան ստէպ, որչափ անդամ Ընկերութեան շահը պահանջէ: Ամէն պարագաւի մէջ, առնուազն շաբաթը անդամ մը պարտաւոր է նիստ գումարել:

Որպէս զի որոշումները վաւերական ըլլան, անդամներուն գոնէ կէսէն աւելին անձամբ ներկայ ըլլալու է:

Որոշումները կը տրուին՝ ներկայ գտնուող անդամներուն ձայներու մնձամանութիւնովը: Եթէ ձայները հաւասար ըլլան, նախագահին ձայնը առաւելակիւտ է:

Յօդուած 15

Վարչական Խորհուրդին որոշումները կը հաստատուին ատենագրութիւններով, որոնք պիտի արձանագրուին յատուկ տոմարի մը մէջ, և նախագահին ու ներկայ բոլոր անդամներուն կողմէ պիտի ստորագրուին:

Այս որոշումներուն պատճենները կամ քաղուածները վաշ-  
ւերական ըլլալու համար, պէտք է ստորագրուին Նախագահին  
կամ Դեր-Նախագահին կողմանէ :

Ամէն պայմանագիր, մուքհակ կամ վաւերագիր, որք  
Բնկերութիւնը յանձնառութեան կ'ենթարկեն, պէտք է ստո-  
րագրուած ըլլան հաւաքարար Վարչական Խորհուրդի երկու  
անդամներու և կամ մէկ անդամն և Բնկերութեան Տնօրէնին  
կողմանէ :

Յօդուած 16

Վարչական Խորհուրդի իւրաքանչիւր անդամ՝ պէտք է  
150 բաժնեթուղթ ունենայ :

Այս բաժնեթուղթերը իր վարչութեան գործերուն իրը  
երաշխառութիւն պիտի նկատուին :

Բնկերութեան մնառուկին մէջ այս անունով աւանդ  
պիտի մնան իր պաշտօնին բավանդակ տեսլութեան միջոցին և  
անոնք չի պիտի կրնան ծախտուիլ, մինչև որ բաժնեատէրերու  
Բնդէ. Ժողովը ընդունի և վաւերացնէ իր պաշտօնավարութեան  
շրջանին համուպատասխանող հաշիւները :

Յօդուած 17

Բնդէ. Ժողովին երկու գումարումներու ժամանակամիջու-  
ցին մէջ եթէ Վարչական Խորհուրդի անդամութեան պաշտօն  
թափուր մնայ, և կամ Խորհուրդը յարանար դատէ Յօդ. 12ին  
համաձայն իր թիւը լրացնել, ան կրնայ առժամեայ կերպով  
նոր վարիչներ անուանել, և Բնդէ. Ժողովը, իր առաջն  
գումարումն մէջ կը հաստատէ այս կերպով անուանուած ան-  
դամները կամ անոնց տեղ ուրիշներ կ'ընարէ :

Երբ վարիչներուն թիւը 5 էն պակսի, մասցազ անդամները  
պարտաւոր են, կարելի եղածին չտի ամենակարձ ժամանակի  
մէջ լրացնել իրենց թիւը այս նուազագոյն չափին հասցը-  
նելով զայն :

Պաշտօնավարութեան շրջանը գետ չաւարտած վարիչի մը  
տեղ, երբ ուրիշ մը ընտրուի, այս վերջինը պաշտօնի վրայ կը  
մնայ այնքան տաեն, որքան որ պէտք է իր նախագոյն շրջանը  
աւարտելուն :

Յօդուած 18

Վարչական Խորհուրդը, ամէն տարի, իր անդամներուն  
մէջն կ'ընարէ իր Նախագահն և Դեր-Նախագահը :

Նախագահին և Դեր-Նախագահին բացակայութեանը,  
Խորհուրդը իր անդամներէն մէկը կ'ընարէ՝ Նախագահի պաշտօնը  
վարելու համար :

Յօդուած 19

Այս վարիչները՝ որոնք արտասահման կը բնակին, և  
անոնք՝ որոնք առժամարար բացակայ կը գտնուին, Վարչա-  
կան Խորհուրդին գումարումներուն մէջ կրնան իրենց փոխանոր-  
դութիւնը տալ իրենց պաշտօնակիցներէն մէկուն, պարմանաւ  
որ փոխանորդ կարգուած անդամը երկուքն աւելի քուէ չու-  
նենայ, իրենն ալ միասին հաշուելով :

Վարչական Խորհուրդին անդամները, իրենց պաշտօնին  
հանգամանքավ, Բնկերութեան յանձնառութիւններուն վերա-  
բերմամր ո և է անձնական պատասխանառուութիւն չունին:

Իրենց ստանձնած պաշտօնին կիրառութեանը համար  
միայն պատասխանառու են:

Վարչական Խորհուրդին անդամները թէ իրենց հաշուոյն  
և թէ իրենց պատականած ընկերութիւններուն հաշուոյն պիտի  
չկրնան ո և է զործառնութիւն ընել Բնկերութեան հետ, մինչեւ  
որ Վարչական Խորհուրդին լողոր անդամներուն կողմանէ միա-  
ձայնութեամբ արտօնուած ըլլան :

Յօդուած 20

Վարչական Խորհուրդը լիազօր իշխանութիւն ունի Բնկե-  
րութեան անունով գործելու, և անոր նպատակին հետ առըն-  
չութիւն ունեցող ամէն գործեր, գործողութիւններ և պայմա-  
նագրութիւններ կատարելու, և արտօնելու, բաւարար  
կամոնագրին արտամազբութիւններուն համաձայն, բաժնեատէրերու  
Բնդէ. Ժողովին վերապահուած իրաւասութեան սահմանին  
մէջ չի մտնեն :

Կը կնքէ և կ'արտօնէ կնքերու, ամէն տեսակ կարգադրութիւններ, համաձայնութիւններ և պայմանագրութիւններ :

Կը գնէ կամ կը վաճառէ թափուր կամ վրան չէնք շինուած հոգեր, ամէն տեսակ անշարժ կարուածներ, ամէն տեսակ արտօնութիւններ և անոնց փոխարժէքները կը ստանայ :

Ամէն տեսակ անշարժ ստացուածքներ վարձելու և վարձու տալու պայմանագիրներ կը կնքէ, վաճառման կամ դնման խոստումով կամ առանց խոստումի :

Ամէն տեսակ առարկաններու և վաճառքներու յանձնարարութիւն, գնում, վաճառում և փոխանակութիւն կ'ընէ :

Սակարանական և առևտրական արժեթուղթիւր, ամէն տեսակ տոմսներ, փոխանակագիրներ, բևոնագիրներ, ստացագիրներ և անդորրագիրներ, կը ստորագրէ, կը փոխանցէ և կ'ընդունագրէ :

Ամէն գումար կ'ընդունի կը գանձէ, և ընկալագիր կուտայ : Ամէն վճարում և գանձում կ'արտօնէ :

Ամէն տեսակ փոխառուութիւն կ'ընէ, վարկեր կը բանայ, մէկ կամ մէկ քանի անգամէն փոխառութիւններ կ'ընէ իր որոշած պայմաններով, պայմանաժամով և տոկոսի սակով :

Ա'որոշէ գնում և վաճառում ամէն անշարժ կարուածներու : Կրնայ իրաւախո՞ւ ըլլալ, ուրիշն իրաւարարութիւն յանձնել, դատէ ձեռք քաշել :

Թէ իրրե դատախազ և թէ իրրե դատախազնեալ կրնայ դատ վարել :

Ընկերութեան բոլոր գործառնութիւնները կը կարգադրէ : Մասնաճիւղերու հաստատումը կ'որոշէ :

Կ'անուանէ կամ կը հրաժարեցնէ բոլոր տնօրինները, պետերը, պաշտօնաները, գործակատարները և ներկայացուցիչները, անոնց վարձքերը կը սահմանէ, իրրե որոյ թոշակ կամ յանձնարարողէք, պարզեներ կամ շահակցութիւններ կը յատկացնէ անոնց :

Կ'որոշէ և կը սահմանէ պահեստի դրամագլխուն գործածութեան նղանակը, կ'որոշէ շահարամինները :

Ընդէ . Ժողովը նիստի կը հրաւիրէ, իր օգտակար կամ յարմար դատած առաջարկներն ընկլու համար անոր :

Մէն մի տարիշը անդ վերջը Ընկերութեան հաշիւնները կը փակէ և Ընդէ . Ժողովին հաւանառութեան կ'նիմարիէ:

Ընդէ . Ժողովին քննութեան ենթարկելու համար կը պատրաստէ ընկերութեան վիճակին վրայ իր տեղեկագիրը և կը կազմէ անոր գործառնութեանց մէկ ցուցակագիրը :

Բաշխելի չահարաժենին գումարը կ'առաջարկէ :

Ընդէ . Ժողովին քննութեանը կ'ենթարկէ կանոնագրին մէջ ըլլուելիք փոփոխութիւնները և յաւելումները, ինչպէս և Ընդէ . Ժողովին որոշման վերապահուած միւս բոլոր ինդիրները :

Ընդէ . Ժողովին որոշմանը կը գործադրէ :

Իրաւասութիւն ունի Ընկերութեան նպատակին հետ առնջութիւն ունեցող ամէն գործառնութիւն որոշելու և գործադրութեան դնելու :

Կ'որոշէ այն գործակատարները որոնց ստորագրութիւնները, յանձնառութեան պիտի ենթարկին Ընկերութիւնը :

Վարչական Խորհուրդին տուած իրաւասութեանց վերցիշեալ թւումը բացատրութեան համար է և ոչ թէ իր իրաւունքները սահմանափակելու համար :

### Յօդուած 21

Վարչական Խորհուրդը իր իրաւասութիւններուն ամբողջութիւնը կամ անոնց մէկ մասը, որոյ նպատակներու կամ որոյ ժամանակի մը համար, կրնայ՝ մասնաւոր փոխանորդագիրով մը՝ յանձնել իւր անդամներէն մէկուն կամ մէկ քանիին:

Կրնայ նաև այդ իրաւասութիւնները յանձնել, ընթացիկ գործերը վարելու համար, Խորհուրդէն դարս գտնուած մէկ կամ մէկ քանի անձերու :

### Յօդուած 22

Վարչական Խորհուրդի անդամները իրենց յատկացուած չահարաժենէն զատ՝ ներկայութեան վարձագիրն պիտի ստանան որուն գումարը Ընդէ . Ժողովը պիտի որոշէ և որ չպիտի փոխուի մինչեւ նոր որոշում :

Իրրե բացառութիւն, առաջին չըջանին համար, ներկայութեան վարձագիր՝ իւրաքանչիւր անդամի և նիստի համար՝ մէկ օամ, ուկի որոշուած է :

## ԳԼՈՒԽ Դ.

ՀԱՇՈԽԵՔՆՆԻԶՆԵՐ

Յօդուած 23

Ընդհ. Ժողովը, ամէն տարի, բաժնետէրերէն երկու հաշուեքնիչ կանուանէ, ընկերութեան բոլոր հաշիւները քննելու համար :

Անոնք պարտաւոր են Ծնկերութեան վիճակին, հաշուեկոփն և Վարչական Խորհուրդին ներկայացուցած բոլոր հաշիւներուն վրայ տեղեկագիր մը տալ Ընդհ. Ժողովին :

Հաշուեքնիչները պէտք է սեփականատէր ըլլան Ծնկերութեան Յ0 բաժնեթուղթերու և զանոնք տաւանդ թողուն Ծնկերութեան մսուուկը, ուր անվաճառելի պիտի միան անոնք իրենց պաշտօնին բովանդակ աւողութեանը :

Եթէ երկու հաշուեքնիչներէն մին օրինական սրտածառով կամ մնոնելով արգիլուի իր պաշտօնը կատարելէ, միւսը կրնայ կատարել իր պաշտօնը վաւերական կերպով :

Հաշուեքնիչները ամին անգամ որ Ծնկերութեան շահերուն յարմար դատեն, իրաւունք ունին տօմարները աչքէ անցունելու և Ծնկերութեան գործառնութիւնները քննելու :

Ստիպուական պարագաներու մէջ, կրնան Վարչական Խորհուրդին ինպրեկ որ Ընդհ. Ժողովը նիստի հրաւիրէ և եթէ Խորհուրդը գոհացում չի տայ իրենց պահանջման, իրենք իսկ նիստի կրնան հրաւիրել Ընդհ. Ժողովը :

Իրաւունք ունին ամէն տարի հաստուցում մը ստանալու. որուն քանակը Ընդհ. Ժողովը պիտի ստանանէ :

Բացառութիւն ըլլալով առաջին հաշուեքնիչներն են

ՏԵԱՐՔ ԱՐՏԱՇԵՍ ՀԻՒՄԱՆԻԴ

ԶԱՐՄԱՅՅՈՐ ՃԵՄԱՐՏԱԿՈՒ

## ԳԼՈՒԽ Ե.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐ

Յօդուած 24

Ընդհ. Ժողովը բաժնետէրերու ամբողջութիւնը կը ներկայացնէ, երբ կանոնաւորապէս կազմուած ըլլայ :

Յօդուած 25

Սովորական Ընդհ. Ժողովը, ամէն տարի, Ծնկերութեան կեղրոնատեկին մէջ կը գումարուի Վարչական Խորհուրդին ուրոշած թուականին, տարեցջանի փակման յաջորդող վեց ամիսներուն մէջ :

Ընդհ. Ժողովը կրնայ նաև արտաստվոր նիստի հրաւիրուիլ Վարչական Խորհուրդին, և, ստիպուական պարագաներու մէջ ալ, հաշուեքնիչներու կողմանէ :

Ընդհ. Ժողովը նիստի պէտք է հրաւիրուի՝ Վարչական Խորհուրդին կողմէ՝ նաև այն պարագային, երբ զրամագլխուն առ նուազն 25 Յ/Ը ներկայացնող բաժնետէրերու խումբի մը կողմէ պահանջուի, պայմանաւ որ այդ բաժնետէրերը գումարման շարժառիթներն ու նպաստելը իմաց տան, և ապացուցանեն թէ Վարչական Խորհուրդին կողմէ նշանակուած տեղեր՝ իբր աւանդ յանձնած են իրենց վերաբերեալ բաժնեթուղթերը : Այսպէս յանձնուած բաժնեթուղթերը վար պիտի դրուին մինչեւ Ընդհ. Ժողովին վերջանալը :

Առևտրական և Հանրօգուստ Շինութեանց նախարարութեան կողմէ կարգուած պաշտօնեայ մը ներկայ պիտի գտնուի բոլոր ստիպուական և արտաստվոր Ընդհ. Ժողովի նիստերուն :

Յօդուած 26

Բաժնետէրերը Ընդհ. Ժողովին մասնակցերու իրաւունք ունինալու համար պարտաւոր են իրենց բաժնեթուղթերը իբր տաւանդ թողուլ Վարչական Խորհուրդին ցոյց տուած կամ հաւանած տեղերը Ժողովին գումարուամի թուականնեն առնոււզն 10 օր առաջ :

Ընդհ. Ժողովին մասնակցութեան իրաւունք ունեցող

առնեն բաժնեատէր կրնայ իրեն աեղ փոխանորդ մը կարգել,  
պայմանաւ որ այդ փոխանորդը ինքն ալ ի՞նդէ. Ժողովին ան-  
դամ ըլլայ :

Առնուագն 20 բաժնեթուղթ ունեցողներն իրաւունք  
ունին ի՞նդէ. Ժողովին մէջ քուէ տալու :

Ի՞նդէ. Ժողովին իւրաքանչիւր անդամը իրը սեփականատէր  
կամ իրը փոխանորդ որքան քան բաժնեթուղթ ներկայացնէ  
այնքան ձայն կունենայ, բայց չի կրնար ընդամենը տասն և  
հինգ ձայնէն աւելի ունենալ :

Ուուազ քանակութեամբ բաժնեթուղթ ունեցողները կրնան  
միանալով պահանջուած թիւը կազմել և մամնացիլ Ժողովին  
իրենցմէ մէկուն միջոցաւ կամ փոխանորդ կարգելով Ժողովին  
մասնակցելու իրաւուք ունեցող բաժնեատէր մը :

Յօդուած 27

Ժողովին գումարումներուն հրաւէրներն կ'ըլլամ՝ պաշտօ-  
նաթերթին և կ. Պոլուց ուրիշ թերթի մը մէջ՝ առնուազն ամիս  
մը առաջ հրատարակուած յայտարարութիւններով :

Գումարման օրը պէտք է հազորդուի Սուետական և Հան-  
րօգուած Շինութեանց Նախարարութեան, որպէսպի սոյն նա-  
խարարութիւնը եթէ յարմար դասէ, ներկայացուցիչ մը  
զրկէ ի՞նդէ. Ժողովին ներկայ ըլլալու համար :

Յօդուած 28

Ի՞նդէ. Ժողովը կանոնաւորապէս կազմուած կը նկատուի  
ներկայ գտնուող կամ ներկայացուած անդամները ի՞նկերու-  
թեան դրամագլխուն մէկ քառորդը ներկայացնեն :

Եթէ առաջին ժողովի մը մէջ պէտք եղած թիւը չի գոյանայ,  
երկորդ ժողովի մը հրաւէր կըլլայ, և հուն ներկայացուած  
դրամագլխուն քանակը որքան ալ ըլլայ, Ժողովը վաւերական  
կը համարուի, միայն թէ առաջին ժողովին օրակարգին վրայ  
կընսն տեղի ունենալ խորհրդակցութիւնները :

Այս նոր նիստը առաջին նիստէն պէտք է որ առ նուազն  
15 և առ առուելին մէկ ամիս ետք տեղի ունենայ, և հրաւէր-  
ներն ալ առ նուազն 10 օր առաջ պէտք է ուղղուին :

Յօդուած 29

Ի՞նդէ. Ժողովին կը նախագահէ Վարչ . Խորհուրդին նա.  
Խափահը կամ, անոր բացակայութեան, Դեր նախագահը :

Դեր նախագահին բացակայութեանը պարագային, Վարչա-  
կան Խորհուրդին կողմէ՝ նշանակուած վարիչ մը կը վարէ  
նախագահին պաշտօնը :

Ներկայ գանուող մէծ բաժնեատէրերէն երկուքը կը հրաւէ-  
րուին քուէաքննիչի պաշտօնը կատարելու :

Նախագահը և քուէքննիչները կ'ընտրեն քարտուղարը :

Յօդուած 30

Ի՞նդէ. Ժողովին որոշումները կը արուին ձայներու միջա-  
մասնութիւնով :

Վարչական Խորհուրդը կը կազմէ ի՞նդէ. Ժողովին օրակարգը:  
Եթէ ի՞նդէ. Ժողովը հաշուեքննիչներու կողմէ հրաւէրուած  
ըկայ, անոնք կը կազմեն օրակարգը :

Ժողովին մէջ վիճաբանութեան կը գրուին Վարչական Խոր-  
հուրդին օրակարգին մէջ զրած ինդիրները, նոյնպէս ևայն խրն-  
դիրները՝ որոնք զրամագլխուն առ նուազն 25% ըներկայացնող  
բաժնեատէրերու խումբ մը, գումարումնէն մէկ ամիս առաջ,  
ներկայացուցած ըլլայ վարչական Խորհուրդին :

Օրոկարգին դուրս խնդիրներու վրայ խորհրդակցութիւններ  
չեն ըլլուիր :

Յօդուած 31

Տարեկան ի՞նդէ. Ժողովը կը լսէ այն տեղեկագիրները գորա  
իրեն կը ներկայացնեն Վարչական Խորհուրդը՝ ի՞նկերութեան  
գործերուն կացութեանը վրայ և հաշուեքննիչները՝ հաշիւնե-  
րուն վրայ :

Կը վիճաբանի հաշիւներուն վրայ կը վաւերացնէ կամ կը  
մերժէ զանոնք:

Կ'որոյէ բաժնեթուղթիւրուն միջն բաշխուելիք շահարամինը:

Կ'անուաննէ՝ Վարչական Խորհուրդին վախուած անդամնե-  
րուն տեղ՝ նոր անդամներ :

Կը խորհրդակցի ի՞նկերութեան բոլոր շահերուն վրայ և  
բացարձակ իրաւասութեամբ կը անօրինէ զանոնք, Վարչական

Խորհուրդին կուտայ օգտակար դաստեած յաւելուածական իրաւասութիւններ :

Կողոքէ Վարչական Խորհուրդի անդամներուն ներկայութեան վարձագինին գումարը և հաշուեքնիներու արուելիք հաստեցումը :

Յօդուած 32

Ընդհ.ժողովին որոշումները կը հաստատուին ատենապրութիւններով, որոնք կ'արձանագրուին յաստակ տետրակի մը մէջ, և կը ստորագրուին ժողովին նախագահին, քուէքնինիւններուն և քարտուղարին կողմանէ :

Խրաբանչիւր Ընդհ. ժողովի համար կը բանուի ներկայութեան թիրթ մը, որ կը պարունակէ ներկայ բաժնետէրերուն անունն ու բնակավայրը և անոնց խրաբանչիւրին ունեցած բաժնեթուղթերու քանակութիւնը :

Այս թիրթերը պէտք է ստորագրուին ժողովին ներկայ գտնուող անդամներուն կողմէ և ժողովին օրուան արձանագրութեանը կցուին :

Այս թիրթը պիտի հազարդուի ամէն չահագրգուողի երբ պահանջէ զայն :

Վարչական Խորհուրդի և հաշուեքնիներու տեղեկագիրներուն ինչպէս նաև արձանագրութիւններուն ընդօրինակութիւններէն հիմքական օրինակ պէտք է ներկայացնել Առևտրական և Հանրօգուտ Ենթութեանց նախարարութեան :

Ընդհ. ժողովի խորհրդակցութիւններուն ամփափոյքը պէտք է հրատարակութեան տալ պաշտօնաթիրթին և ուրիշ թիրթի մը մէջ :

Յօդուած 33

Ընդհ. ժողովին արձանագրութեանց քաղուածքները կամ ընդօրինակութիւնները վաւերական ըլլալու համար, պէտք է որ ստորագրուած ըլլան Վարչական Խորհուրդին նախագահին կամ անոր փոխանորդին կողմէ :

Յօդուած

Ընդհ. ժողովին որոշումները, երբ ներկայ կանոնագրին համաձայն արուած ըլլան, պարտաւորին նոյն խէլ բացակայ կամ սարակարծիք եղողներուն համար :

## ԳԼՈՒԽ Զ.

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԻԿԱՆՔ—ՑՈՒՑԱԿԱԳԻՐ (INVENTAIRE)

Յօդուած 35

Ընկերութեան տարին կը սկսի Յունվար 1 ին և կ'աւարտի յաջորդ Դեկտեմբեր 31 ին :

Սուաջին տարեշրջանը պիտի հաշուուի, բացառարար, Ընկերութեան վերջնական կազմութեան թուականէն սկսեալ մինչև յաջորդ 31 Դեկտեմբերի :

Վարչական Խորհուրդը կը կազմէ, ամէն տարեշրջանի լրանալուն՝ Ընկերութեան գոյքերուն և պարտքերուն ընդհանուր ցուցակագիրը :

Այս ցուցակագիրը ինչպէս նաև հաշուելուու ու հաշիւները Ընդհ. ժողովին գումարման օրէն 40 օր առաջ պիտի յանձնուին հաշուեքնիներուն և յետոյ պիտի ներկայացուին տարեկան Ընդհ. ժողովին :

Ժողովին ներկայ գտնուելու իրաւունք ունեցող ամէն բաժնետէր կրնայ անոնց տեղեկանալ և քննել զանոնք :

## ԳԼՈՒԽ Է.

ՇԱՀԵՐՈՒ ԲԱԺԱՆՈՒՄ—ԳԼՈՒԽ ՎՃԱՐ

Յօդուած 36

Բոլոր ծախքերը գեղչելէ, ինչպէս նաև Վարչական Խորհրդին կողմանէ կարեոր գատուած ամօրթիսըմանները ընկէ

վերջ, արամազրելի մնացած գումարը կը կազմէ զուտ շահը:  
Այս շահերէն նախ պիտի հանուին.

1. Հարթերին տառը, պահեստի պարաւորիչ դրամա-  
գուլս մը կազմելու համար:

2. Անհամեցած գումարը. վճարուած դրամազլիսուն վրայ  
5% տոկոս վճարելու համար բաժնետէրուն՝ իրեւ առաջին  
շահաբաժին:

Այս երկու կանխահանուամներէն վերջ մնացեալ շահը պիտի  
բաժնուի հետեւալ կերպով.

ա.— 15% հիմնաղիբի բաժիններուն.

բ.— 20% Վարչական Խորհուրդին.

գ.— 5% պաշտօնէութեան: Այս 5% ինքաշիսումը պիտի  
կտարուի Վարչական Խորհուրդին կողմանէ:

Յոլոր բաժնեմթուղթերուն և հիմնաղիբի բաժիններուն տո-  
կոնները և շահաբաժինները կտրոնը կրողին պիտի վճարուին:

դ.— 60% ը պիտի Ընդհ. Ժողովին տրամազրու-  
թեան տակ որ, Վարչ. Խորհուրդին առաջարկութեան համա-  
ձակն՝ անոն պիտի կրնայ պահեստի սովորական գումարը  
աւելցնել, կամ պահեստի մասնաւոր դրամազլուին մը կազմել,  
կամ բաժնեմթուղթերուն յաւելուածական շահաբաժին մը վը-  
ճարել և կամ յաջորդ տարեշրջանին փոխանցել զայն:

Յօդուած 37

Ընդհ. Ժողովը կրնայ որոշում տալ՝ տարեկան զուտ շա-  
հերէն գումար մը գուրս հանելու, հրապարակէն ո և է քա-  
նակութեամբ՝ բաժնեմթուղթի ևս քաշելու համար վիճակին  
նութեամբ:

Այս կերպով՝ զիսավճարուած բաժնեմթուղթերը պիտի  
շարունակին ստանալ շահաբաժինները, բայց տոկոսի իրաւունքը  
պիտի կորսնցնեն:

## ԳԼՈՒԽ Ը.

ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼԻՍՈՒՆ

Յօդուած 38

Պահեստի դրամազլուիք կը կազմուի, 36 յօդուածին հա-  
մաձարն, տարեկան զուտ շահերէն հանուած գումարներով:

Այս պահեստի արտասարդու կամ չի նախատեսուած ծրխ-  
քերը դիմաւորելու տահմանուած է:

Երբ պահեստի դրամազլուիքը, ընկերական դրամազլիսուն  
կէսին հաւասարի, կանխահանուամը պիտի գազրի. բայց նորէն  
պիտի գործազրուի, եօր պահեստի դրամազլիսուն գումարը  
ընկերական դրամազլիսուն մէկ երրորդէն նուազ ըլլայ:

Յօդուած 39

Երբ մէկ տարուան արդիւնքը անբաւական ըլլայ 5% տո-  
կոս մը կամ շահաբաժին մը տալու, տարբերութիւնը պահես-  
տի դրամազլիսէն պիտի առնուի:

Յօդուած 40

Երբ Ընկերութեան պայմանաժամը լրանայ և իո յանձնա-  
ռութիւնները ամրողապէս զործադրուին, պահեստի գումարը  
պիտի բաժնեաւի ամրող բաժնեմթուղթերուն միջն:

## ԳԼՈՒԽ Թ.

ԵՐԿԱՐՈՉԳՈՒՄ - ԼՈՒԾՈՒՄ - ՀԱՇՈՒԵՑԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ

Յօդուած 41

Վարչական Խորհուրդը կրնայ, ամէն ժամանակ և ինչ

պատճառով որ ըլլայ , Ընդհ . Ժողով գումարել և առաջարկել . Ընկերութեան տեղութեան երկարածումը , լուծումը և հետեւաբար՝ Ընկերութեան հաշուեյարդարութիւնը , ձուլումը ուրիշ ընկերութեան մը հետ , Կանոնագրին բարեփոխումը և զրամագլխուն յաւելումը՝ նոր բաժնեմթուղթեր հրապարակ հանելով հնչուն դրամի կամ գոյքի փոխարէն , պարտամթուղթերու սահեղումը և Ընկերութեան նպատակին ընդարձակումը կամ սահմանափակումը :

Սակայն , երկարածումը կամ ձուլումը , ինչպէս և զրամագլխուն յաւելումը , Կանոնագրին բարեփոխումը . պարտամթուղթերու հրապարակ հանումը և Ընկերութեան նպատակին մէջ փոփոխութիւններու ներմուծումը Կայս . Կառավարութեան արտօնութեամբ միայն կրնան գործադրուիլ :

#### Յօդուած 42

Երբ Ընկերութեան դրամագլխուն կէսը կորսուի , Վարչ . Խորհ հուրովը Ընդհ . Ժողովը կը գումարէ , որ կը վճուէ թէ պէտք է Ընկերութիւնը լուծել կամ թէ գործառնութիւնները շարունակել :

#### Յօդուած 43

Ընկերութեան պայմանաժամը երբ աւարախ և կամ ժամանակէն առաջ լուծուի , Ընդհ . Ժողովը նիստ գումարելով կը կարգադրէ հաշուեյարդարութեան եղանակը և կ'անուանէ մէկ կամ մէկ քանի հաշուեյարդարներ :

Հաշուեյարդարութեան միջոցին , Ընդհ . Ժողովին իրաւասութիւնները կը շարունակուին Ընկերութեան գոյութեան առենին պէս :

Ընդհ . Ժողովը Ընկերութեան բոլոր շարժուն և անշարժ գոյքերը հնչունի վերածելու համար՝ հաշուեյարդարներուն կուտայ իւր յարմար գատած իրաւասութիւնները :

Հաշուեյարդարները կրնան Ընդհ . Ժողովին որոշման համաձայն և Կայս . Կառավարութեան արտօնութիւնով ուրիշ Ընկերութեան մը կամ անձի մը փոխանցել լուծեալ Ընկերութեան իրաւունքներն և յանձնառութիւնները :

#### Յօդուած 44

Արտասովվոր Ընդհ . Ժողովները , որոնք պիտի գումարուին ար զլիուն մէջ յիշատակուած խնդիրներուն վրայ որոշում տալու համար , վաւերական պիտի համարուին եթէ կազմուին զրամագլխուն առնուազն կէսը միացնող բաժնետէրերէ :

Երբ Ժողովը առաջն գումարման կանոնաւրապէս չի կազմուի , երկրորդ անգամ նիստի հրաւէր պիտի ըլլայ : Այս երկրորդ Ժողովը կանոնաւրապէս կազմուած պիտի համարուի եթէ ներկայ գտնուող կամ փոխանորդութիւն ունեցաղ բաժնետէրերը ներկայացնեն Ընկերութեան դրամագլխուն քառորդը :

#### Յօդուած 45

Ընկերութեան տեղութեան ընթացքին մէջ կամ հաշուեյարդարութեան ատեն , Ընկերութեան գործերուն նկատմամբ , թէ բաժնետէրերուն ու Ընկերութեան , թէ ուրիշներուն ու Ընկերութեան և թէ բաժնետէրերուն միջև ծագած ամէն անհամաձայնութիւն կ . Պոլսոյ Օսմանեան ատեաններու վճուն պիտի ենթարկուի :

#### Յօդուած 46

Ընկերութիւնը իւր հաստատութեան թուակունէն միւշն մէկ ամիս պարտաւոր է պաշտօնաթերթին և կ . Պոլսոյ ուրիշ թերթի մը մէջ իր ծախքով հրապարակել տալ իւր կանոնագրին էական տրամադրութիւնները պարունակող քաղուած մը :

#### Յօդուած 47

Ընկերութիւնը , իւրաքանչիւր տարուան վերջ , ու Առետրական և Հանրօգուս Շինութեանց Նախարարութեան վիճակագրական Դիւանին Տեսչութեան կողմէ հաղորդուած օրինակին համաձայն , պիտի ներկայացնէ իւր գործառնութիւններուն մէկ վիճակացոյցը :



ՀՀ Ազգային գրադարան



NL0204278

